7. ԴԸՌԴՈՏՎԱԾ ԱՌՈՒՏՈՒՐԱԿԱՆԸ

Իլալ ա, չիլալ մին առուտուրական։ Ըտրան իլալ ա մին կընեգյ։ Տահանք շաա հարուստ ըն իլալ, համ էլ շատ սերավ ըն իլալ։

Մին խիլլա վախտանը ետը էտ վաճառականը քյինում ա խոիդի, նա տրեոնում, կյամ տրեսնըմ էտ կընեգյը ուրան փոխալ ա։

Էտ առուտուրականը կընգանը հրդրցան տուս կյալի հետի, բուսը պահրմ ա, տրեսնըմ դուղ ա։ Տա ընըմավեր մարթ ա ինըմ, ստիպված կընդանը տուս ա քըցըմ։

Ըրփրվերի մընալանը ետը, էրկան վախտ օրիշ կընգա նըհետ վախտ ա անց կրցնում։ Էտ մին կընեգյըն էլ ա ըտրան փոխըմ։

Առուտուրականը շատ ա քնենքյ անըմ, ասըմ ա. — Պա՜, համ հարուստ ըմ, համ ղաշանգյ, պրենը հինչո՞ւմն ա, վեր կընանեքյը ինձ փոխըմ ըն։

Էտ էրկունչի կընեգյը ուրան անըմը թամուզ պրհելի հետե կեղծավերոթուն ա անում։ Մարթը տրեսնում ա պենին թահրը, էրկունչի կընգանն էլ ա խրոիդյ տամ, տուս քրցում, ալլաթ-սալաթ ինում։ Էտ առուտուրականը շատ ա մրտածում, նրստում ա, ընգնում մրթկեն դոնը։

Մին օր տանը նստած մրտածելիս, հրրևանը կյամ ա, ասըմ. — Պարյօր, ա՛ հրրեան, յաղուզ մտածՈ՞ՐՄ ըս, յաղուզ օրփաթա՞խոս ըս տրեռալ, խոսըմ չը՞ս...

Առուտուրականը դրդրհան ա ինում, համ էլ էտ վախտը մրթկավըն անց ա կրենում, վեր հրրևանին կընէգյը ըրկուհուքյիս ա։

Առուտուրականը էտ հրրևանեն ափաթը կտրում ա, թա եք մին պայման կապինք։ Ըսկացալ ըմ, թա կընեգյըտ խուխավ ա, թա ախճիգյ պիրի։ իմ բախտես, թա տըղա պիրի, քու բախտետ, հախը տամ ըմ, թաքյի վեց ըմսեկան ինձ տաս։

Առուտուրականը մտծիս ա, վեր ախճիգյը յոր օնե ինքյը գաստիրակե, մծրցնե, պահե ուրան հետե հունցու կնեգյ։ Գյուղում ա, թա դրստրրակելան ա։ Մին ղաշանգյ օր էտ կընեգյը աղադվում ա, մին ախճիգյ պիրում։ Վեց ամեսը վեր թըմամում ա, էտ առուտուրականը մրեծ փողեր ա տամ, էտ ըխճրկանը յոր օնում, տանում ուրանց տոն։ Էտ վաճառականը ամեն մի հարմարութունը տամ ա, թաքուն պահըմ, վրեր աստուծուն լուսան էլ չի տրեսնա մինչև մրծանալը։

Տասնրհենգյ-տասնրվեց տարե պահում ա, դաստիրակում։

Տասնրվեց տարե ախճիգյը մնում ա ախճիգյ։ Առուտուրականը մին օր քյնում ա առուտուրի։ Ախճիգյը բուրդան կըլխի յա ընգնում, վեր հուրթավը մին թիքյա լուս ա ըրվում։

Մրտածում ա. «էս հի՞նչ ա, հի՞նչ պրեն ա»։ Մրտածում ա, մրտածում, պիրում տաբուրետկեքյը տրնում ուրուր յրա, եր ինում հուրթավը տուս կյամ, հուրթեն ղրաղեն նըստում։

Մարթիքյը քյնամ ըն, կյամ ըն, էտ ախճիգյը ղըրմանըմ ա։ Ասում ա. — էս հի՞նչեր ըն, հի՞նչ զատեր ըն, հի՞նչ պեներ ըն, ըն շուվարը նան հեյվանը ճոկում չի։

Մին օր էլ չգյիդալավ մին քար ա յոր օնրմ, թող անում։ Քարը քյնում ա, մին տըղու նի կյամ։

Տըղան էլ մին քար ա յրա անում, ըխճրկանան տամ։

Տըղան ասում ա. — Հալբաթ ինձ սիրում ա, անգոր ա քարավ տամ։

Մուտանում ա էս ըխճրկանը, ասում. — Տու հո՞ւ վրս, հո՞ւր ախճիգյ ը՞ս, խոսիլը կարում ը՞ս, թա չէ։ Բալքյաս երգյինքան քըշացած հրեշտակ ըս։

Էտ ախճիգյը խոսելը կարըմ չի, լհա ծրեռքավը նշանց ա տամ, վեր հուրթան ա տուս եկալ։

Տըղան ըխճրկանը յոր ա օնրմ, քյնում տոն։ Ըտրանք ապրըմ ըն մինչև առուտուրականին կյալը։ Օխտանասունինչի օրը առուտուրականը կյամ ա, տոնը պենում։ Տըղան կյողլ ա կրենում։ Առուտուրականը տրեսնում ա, դաստի կըլոխ ա ընգնում, վեր ախճիգյը համինը չի, իրեսեն եշում ա, ամմա վեչ մին պեն չի հրրցնում, որո-

շում ա կրլոխ յոր օնե, կորչի, վեր ըխճրկա շոխկ էլ տրեսնա վեչ, վեր իտի անբախտ ա։ Իտի էլ անում ա, հրդե յա ընգնում, քյնում։

Շատ ա քյնում, խրեդ ա քյնում, դրբրոնգյունն չախը հրսնում ա մին ախպերի։ Էն ալմաստ ճիրան, էն ցորտ-ցորտ վրրխկալի ճիրան մին լավ իմում ա, սրերտը հուվրցնում, օղում ա թա թեքյ ընգնի, էն մոտե ծառին տակին քոն ինի, մին էլ մտածում ա՝ ծառը պրցրանա, ծառեն քոն ինի։ Իտի էլ անրմ ա։

Ամմա օխծը կրծածեն քոն կրկյա, ըտրա աշկերեն քոն չի կյամ։

Մին էլ տեսնում ա, մին մարթ կլոխը քաշ քիցած կյամ ա։

Տրան բուսը պահում ա, տեսնում ա եկու, համանը ըխպրին անա ճուր խմից, էտ ըխպրին քշտեն նստից, ջուբան մին յալլրեխ տուս կալավ, մեկնից, հաց, պաներ տրրավ, էն մին ջուբան մին խրնձոր տուս կալավ, ծրեռքումը հանց հրլլորից, տրեռավ մին ղաշանգյ ախճիդյ։ Մին տրեղ նստեցեն, հաց կերեն, խուսեցեն։ Էն ծառեն յրա առուտուրական մարթը վուրուվորդ ա անում, ասում ա, վեր եր կյա, քյրնա հրրցնի, տեսնա էն խրնձորը ըշտղա՞ յա, մինն էլ ինքյը քյինի առնե, պիրի օտե։

Ըտրանք հացը կերին, մարթը կրլոխը տիրավ կրնգանը ծոյնին, քոն իլավ։

Կրնեգյը մարթին կրլոխը տինում ա տափեն, ծոցան մին ասեղ առուս օնում, հանց հրլլորում, հանց պրլլորում, վեր մին ղաշանգյ տղա յա արեոնում, էտ ըխճրկանը սիր ա տամ, սիր առնում։

Էտ առուտուրականը էտ լոխ տեսնում ա ծառեն յրան, մրնում մաթ, ասում.— Չէ, կրնանուցը ճար, հնար չինի՞լ, վեր ղրփազում էլ տինիս, մին ա, մարթին կփոխե։ Պա հո վրե՞ էս հի՞նչ պեն ար, պա ծրեր մասսարը ճաքե՞ կրնանե՞քյ, պա ծրեր օխտը պոռտը, պա ծրեր իստինը-ինգինը հա՞։

Էտ քոն իլած մարթը հի՞նչ ա գյուդում, վեր կրնեգյը օխծը կրծած ա, վեր կրնեգյը մին քիմսամրեռ ա, մին ասծու կրակրն ա, անջախ ասրմ ար, վրեր էն ա ուրան կոխկեն, վրեր կրնգանը տրեղը գյուդող չի կա, հի՞նչ կա՞, մին ալլախ-մալլախ նի կապի, քոն ինի՞ ուզուն ախմախի նման, օղտին ընգուճումը քոն իլածի նման։

Էտ կրնեգյը, վեր ուրան մարթին եր կրնալի վախտը կյամ ա, էտ ղաշանգյ, թշերը կյարմուր, ինքյը սիպտակ տղին, էտ սրեվ մաղերավ, սրեվ աշկ-ունքավ, վրուվրռում տղին հանց հրլլորից, հանց պրլլորից, վեր էլհա մին ասեղ շինից, կոխից ծոցը։ Մարթին կլոխրն էլ պրցրցրավ, տիրավ գյուրգյումը, նրստից, ասիս լհա՞ վեչ մին պեն

չի գյուղում, ասիս լհա՜ աշխարքաս բեխաբար մին կըթնակեր ա՞, հա՜լա թա՜զա՜ յա կըռքնեն տուս կյամ։

Մարթը եր ա կըենում, կընգանը պըշպըշորում, հըլլը՜-պըլ-լոր անըմ, մին խընձոր շինում, տինում ջուբումը, էլհա ուրա՜ն հըզեն քյընում։ Հիշտեղ քյընում ա, էտ առուտուրականը հետան։ Վերչը հըսնում ա ընդրա հետան, հըրցնում. — Ախպեր, ըշտե՞ղ ըս քյընում։

Էտ մարթն ասում ա. — Ցրես էլ չըմ գյուղում, քյնում ըմ իլի՞։

— Դե մին չինինք, էրկու ինինք, եք քյինինք։

— Հի՞նչ կինի։

Ըտրանք քյընում ըն, քյընում, հըսնում ըն թուշ էն առուտուրականեն շենը։ Էտ մարթը մըտածում ա, թա հիշտեղ ղոնաղ ընգնին, քըշերը կըենան։

Էտ առուտուրականն ասում ա. — Ըստեղ կաց, յըես մին ծանոթ օնիմ, քյնա՜մ կոշտը, էլհա կյամ էս սհաթիս։

Առուտուրականը նի յա մընում դըրրըզավը, էտ վախտը էտ ախճիգյը էտ տղին նհետ սիր ա տամ։ Լհա՜ վեր տըռնեն չըխչըխկոցը լսում ըն, էտ տղան նի յա մնում տըխտատեղը։ Առուտուրականը կյամ ա տոն, ըխճըկանը կարքատիրում, վեր էն մունուտին մին խորագյ պըդրաստե վեց ամաև, վեց քըթոլ կոխկեն։ Մին բոթուլ կյինի, վեց ստաքան կոխկեն, իտի մին սհաթանը եստը հազը ինի։

Ասում ա, պըրծնում, տուս կյամ, քյընում էն մարթին կոշտը։ Պատառ զրուց ա անում, ըտրան յոր օնըմ, կյամ տոն, տեսնում լոխ պադրաստ։

Նստում ըն հաց օտին, էն ախճիգյն ասում ա. — Բա հո՞ր ըն հնգյերունքտ։

Առուտուրականն ասում ա. — Նստե, կըկյան։ Ախճիգյն էլ ա նստում։

Առուտուրականն ասում ա. — Էն տըղան էլ կինի սոված, պեր հաց օտե։

Ախճիգյը լա՜ց ա ինում, ասում. — Հի՞նչ տղա յա, գյուղում չըմ, լուս աշխարք չըմ տուս եկալ, մըեռունը ճըկատիս, տու խե՞ յըս իտի պեն ասըմ։

— Դե լա՜վ ա, կլկոնձի մի տալ, շուտ ըրա հանե։ Ախճիգյը աթկազ ա անըմ։

Առուտուրականը օղում ա, թա էտ ըխճկանը սպանե։ Վըխելան նըհետ էտ ախճիգյը սիրականեն տուս ա օնըմ։

Առուտուրականը ըտրան նըստըցնում ա ստոլեն քըշտեն։

Ստավ էտ մարթին ասում ա. — Ախպեր, նշանածտ էլ կինի սոված, բյրսօրին կերածնետ ա, հանի պեր հաց օտե։

Էտ մարթն ասում ա. — Հի՞նչ նշանած ա, հի՞նչ պեն։

Առուտուրականն ասում ա. — Ցրես էլ ըմ գյուղում, պեր, ջուրնետ պենը տուս կալ։

Հընդյերը տուս ա օնում, խընձորը հըլլորում-պըլլորում, մին ախհիդյ ա արեոնում, տնում ստոլեն քըշտին։

Օդում ըն, թա հաց օտին, առուտուրականը էտ ըխկանն ասում ա. — Դոշիտ ասեղը տուս կալ, սոված կինի, թող հաց օտե մըզնըհետ։

Էտ մարթը տեսնում ա, վեր առուտուրականը դուղ ա ասում, ինքն էլ մին ղոլան ա ստիրում։

Կընեգյը ճըղճըղամ ա, մարթին ուշունց ա տամ, մարթին հոբը դյոռավ ասում, ըղբըղամ, թա. — Մինչի օրս մինը գյուղում չի, թա մունք կանք։ Խե՞ յըս պերալ էս ըխմախեն կոշտը։

Ստիրում ըն, վեր էտ կընեգյը ասեղը հանե։ Ասեղը հանում ա, հըլլորում, պըլլորում, մին նախշուն տղա շինում։ Ըտրան էլ ըն նըստըցնում ստոլեն, վեր հաց օտի։

Էտ առուտուրականը յոր ա օնում ըոթուլը, ըստաքաննին լըցնում, ասում. — Հիշտեդ միյամիտ մարթ կա, ընդրան կյենացը։ Հիշքան չըրչըրվեցենք մըեղ հալալ չի տեռավ. էս ուրուգյունըս մեզ բախտ չօնինք։ Ուրեմնս ըստահանք թող մընան։ Ցրես ու տու տուս կյանք էս ըշխարքաս քյինինք։

Թա հըշտեղ ա օղըմ քյինի, մահլում չի անում։